ԱՐՑԱԽԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԵՎ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵՑ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ

Նորին Սրբություն Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսի հայրապետական կոնդակով արքության պատիվ եւ տիտղոս շնորհվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Գերշ. Տ. Պարգեւ եպս. Մարտիրոսյանին:

Կիրակի, հունիսի 6-ին, Սբ. Էջմիածնի հիմնադրման տոնին, հընթացս Սբ. Պատարագի, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի լուսարարապետ Գերշ. Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը հանդիսավորապես ընթերցեց եւ Հայրապետական սրբատառ կոնդակը հանձնեց Պարգեւ Սրբազանին:

Արքության բարձր պատիվը Սրբազան Հորը տրվում է ծննդյան 45 եւ առաջնորդության 10-ամյակի առիթով:

Լինելով Երեւանի Բրյուսովի անվան ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտի շրջանավարտ, 1980 թ. ընդունվել է Սբ. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարան: Աստվածաբանական լրացուցիչ կրթություն է ստացել Լենինգրադի հոգեւոր ակադեմիայում, ուր փայլուն կերպով պաշտպանել է ավարտական թեզը՝ «Աստվածճանաչումը ըստ քրիստոնեական ավանդության եւ միստիկական ուսմունքների՝ յոգայի, թեոսոֆիայի եւ անտրոպոսոֆիայի» թեմայով, որի համար եւ երջանկահիշատակ Վազգեն Ա Կաթողիկոսի կողմից ստացել է ծայրագույն վարդապետական աստիճան.

Սրբազան Հայրը, իբրեւ դասախոս եւ փոխտեսուչ, իր նպաստն է բերել Սբ. Էջմիածնի Հոգեւոր Ճեմարանի դաստիարակչական գործին, եղել է Սբ. Հռիփսիմե վանքի վանահայրը:

1989 թվականից ի վեր Պարգեւ Սրբազանը Արցախի թեմի առաջնորդն է, եւ Վեհափառ Հայրապետի բնորոշմամբ՝ Սրբազան Հոր անունը անքակտելիորեն կապվել ու անբաժանելի մասն է դարձել արցախյան գոյապայքարի:

«Սիա տասը տարիներ սահեցին այդ պատմական օրվանից, եւ Դուք, Ձեր գործակից ու լծակից հոգեւորականների հետ միասին, երբեմն աննկարագրելի զրկանքների ու տառապանքների գնով, կարողացաք հոգեւոր կյանքից բացարձակապես զրկված մեր արցախահայությանը մոտեցնել Հայաստանյայց Ս. Եկեղեցուն եւ իր աստվածօրհնյալ ժառանգությանը: Այսօր Արցախի թեմն իր ողջ կառույցով դարձել է Հայ Եկեղեցու կարեւորագույն օղակներից մեկը, ուր կա կենդանի հավատք, անձնուրաց նվիրում եւ անսպառ եռանդ»,- ասվում է Վեհափառ Հայրապետի կոնդակում:

Պարգեւ արքեպս. Մարտիրոսյանը Գերագույն Հոգեւոր խորհրդի անդամ է:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ